Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1581-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԵՍՔԸ, ՉԵՎԸ ԵՎ ԷՋԵՐԻ ՔԱՆԱԿԸ

1. ԱՆՁՆԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԵՍՔԸ ԵՎ ԷՋԵՐԻ ՔԱՆԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը (այսուհետ՝ անձնագիր) քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար:

2. Անձնագրի արտաքին չափերը և թույլատրելի շեղումները պետք է համապատասխանեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության «Մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթեր» 8-րդ հրատարակության 9303 փաստաթղթի «Մեքենայաընթեռնելի անձնագրերի և TD3 չափի այլ մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթերի տեխնիկական պահանջները» վերնագրով 4-րդ մասի 2-րդ գլխով սահմանված պահանջներին:

3. Անձնագիրը բաղկացած է շապիկից, պոլիկարբոնատային տվյալների թերթից և վիզայի էջերից: Անձնագիրը բաղկացած է 42 համարակալված էջերից, որոնցից պոլիկարբոնատային տվյալների թերթի առաջին կողմը անձնագրի 1-ին էջն է և տիտղոսաթերթը, պոլիկարբոնատային տվյալների թերթի երկրորդ կողմը անձնագրի 2-րդ էջն է և քաղաքացու տվյալների էջը, իսկ անձնագրի 3-42-րդ էջերը ներառյալ վիզայի էջերն են: Անձնագրի էջերը համարակալվում են արաբական թվանշաններով: Վիզայի էջերի համարները լրացուցիչ արտացոլվում են նաև հայկական այբբենական թվային համակարգով՝ համապատասխանաբար 3-րդ էջի «գ»

նշագրումից մինչև 42-րդ էջի «խբ» նշագրումը՝ սույն հավելվածի NN 3-23 ձևերին համապատասխան: Անձնագրի անկյունները կլորացված են:

4. Անձնագրի շապիկի գույնը մուգ կարմիր է (PANTONE 195 C (#782F40)): Շապիկի երեսի վերևի մասում հայերեն, գլխատառերով, իսկ դրանից ներքև անգլերեն, համեմատաբար փոքր գլխատառերով տպագրվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառակապակցությունը: Կենտրոնում պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Հայաստանի Հանրապետության զինանշանից ներքև հայերեն, գլխատառերով, իսկ դրանից ներքև անգլերեն, համեմատաբար փոքր գլխատառերով տպագրվում «ԱՆՁՆԱԳԻՐ» բառը: Ստորին մասում պատկերվում է էլեկտրոնային մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթի միջազգային խորհրդանշանը:

5. Շապիկի վրա պատկերված Հայաստանի Հանրապետության զինանշանը, գրառումները և էլեկտրոնային մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթի միջազգային խորհրդանշանը ոսկեգույն են:

6. Անձնագրի շապիկի ներքին էջն ունի գունային անցումներով ձևավորված բաց ֆոն: Էջի կենտրոնական մասում պատկերվում է Հայաստանի Հանրապետության քարտեզի ուրվագիծը՝ Երևան քաղաքի տեղադրության նշմամբ և «ԵՐԵՎԱՆ» մակագրությամբ: Էջի վերին և ստորին հատվածներում կրկնվող ձևով տպագրվում է «ARM» մակագրությունը: Էջի ստորին մասում հայերեն և անգլերեն տպագրվում են «Անձնագիրը կրողի հովանավորն է Հայաստանի Հանրապետությունը» բառերը: Էջի գրաֆիկական պատկերները, դրանց գունային լուծումները, չափերը և տեղաբաշխումը համապատասխանում են սույն հավելվածի N 2 ձևին:

7. Պոլիկարբոնատային տվյալների թերթը տեղադրվում է անմիջապես անձնագրի շապիկից հետո:

8. Պոլիկարբոնատային տվյալների թերթը պատրաստված է պոլիկարբոնատի սպիտակ և թափանցիկ շերտերից՝ նախատեսված լազերային փորագրման համար: Պոլիկարբոնատային տվյալների թերթի կազմում ներառվում են դրանում ինտեգրված էլեկտրոնային բաղադրիչը, դրա ալեհավաքը և ոչ պոլիկարբոնատային կցակարը:

9. Տիտղոսաթերթի վերին մասում հայերեն և անգլերեն տպագրվում են «Հայաստանի Հանրապետություն» և «Անձնագիր» բառերը: Տիտղոսաթերթի կենտրոնական մասում պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Զինանշանի ներքևում հայերեն և անգլերեն տեղադրվում է անձնագրի տրամադրման, անձի ինքնությունը հավաստելու և որպես ճամփորդական փաստաթուղթ օգտագործվելու վերաբերյալ տեքստը՝ սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Տիտղոսաթերթի ստորին մասում և պոլիկարբոնատային տվյալների թերթի կցակարի վրա ամրագրվում է անձնագրի համարը: Տիտղոսաթերթի գրաֆիկական պատկերները, մակագրությունների դասավորությունը, գունային լուծումները և այլ տեսանելի տարրերը համապատասխանում են սույն հավելվածի N 2 ձևին:

10. Պոլիկարբոնատային տվյալների երկրորդ էջը (քաղաքացու տվյալների էջ) պետք է համապատասխանի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության «Մեքենայաընթեռնելի ճամփորդական փաստաթղթեր» 9303 փաստաթղթի 8-րդ հրատարակության 4-րդ մասի պահանջներին: Այս էջի վերևի մասում հայերեն և անգլերեն, գլխատառերով տպագրվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառակապակցությունը և «ԱՆՁՆԱԳԻՐ» բառը, իսկ էջի աջ մասում պատկերվում է Հայաստանի Հանրապետության դրոշը: Նշված գրառումներից ներքև, ստորև ներկայացվող հաջորդականությամբ, հատկացվում են տեղեր հայերեն և անգլերեն նշելու համար հետևյալ տեղեկությունները՝

1) տիպ.

2) երկրի կոդ.

3) անձնագրի համար.

4) ազգանուն.

5) անուն.

6) սեռ.

7) քաղաքացիություն.

8) ծննդյան օր, ամիս, տարեթիվ.

9) ծննդյան վայրը՝ պետությունը.

10) թողարկման ամսաթիվ.

11) տրամադրող մարմին.

12) վավերականության ժամկետ:


11. Պոլիկարբոնատային տվյալների երկրորդ էջի ձախ մասում տեղ է հատկացվում անձնագրի տիրոջ հիմնական գունավոր լուսանկարի համար, իսկ աջ մասում՝ փոփոխվող կամ բազմակի լազերային պատկերի տեխնոլոգիայով ձևավորված անձնագրի տիրոջ երկրորդական դիմանկարի համար: Էջի աջ մասում՝ անձնագրի տիրոջ երկրորդական դիմանկարից վերև, պատկերվում է էլեկտրոնային անձնագրի խորհրդանշանը («chip inside» logo): Էջի ստորին մասում՝ մեքենայաընթեռնելի գոտուց վերև, տեղադրվում է անձնագրի տիրոջ ստորագրության պատկերը՝ սույն հավելվածի N 3 ձևին համապատասխան: Էջի կենտրոնական աջ մասում պատկերվում է գրաֆիկական պաշտպանական տարր՝ անձնագրի վավերացման նույնականացուցիչ (DOVID): Էջի ստորին մասում տեղադրվում է երկու տողից բաղկացած մեքենայաընթեռնելի գոտին:

12. Վիզայի էջերն ունեն գունային անցումներով ձևավորված բաց ֆոն: Էջերի վերին հատվածում հայերեն և անգլերեն տպագրվում է «Վիզա» բառը, ինչպես նաև տվյալ էջում ներկայացված թեմատիկ պատկերի անվանումը: Վիզայի էջերի գրաֆիկական պատկերները, մակագրությունների փոխադարձ դասավորությունը, գունային լուծումները և այլ տեսանելի տարրերը համապատասխանում են սույն հավելվածի NN 3-23 ձևերին: Անձնագրի հետին շապիկի ներքին կողմն ունի գունային անցումներով ձևավորված բաց ֆոն: Էջի կենտրոնական մասում պատկերվում է Հայաստանի Հանրապետության քարտեզի ուրվագիծը՝ Երևան քաղաքի տեղադրության նշմամբ և անգլերեն «Երևան» մակագրությամբ: Էջի վերին և ստորին հատվածներում կրկնվող ձևով տեղադրվում է «ARM» մակագրությունը: Քարտեզի ներքևում հայերեն և անգլերեն տեղադրվում է «Այս անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է» գրառումը: Հետին շապիկի ներքին կողմի գրաֆիկական պատկերները, մակագրությունների փոխադարձ դասավորությունը, գունային լուծումները և այլ տեսանելի տարրերը համապատասխանում են սույն հավելվածի N 23 ձևին:


13. Անձնագիրն ունի տվյալների էլեկտրոնային պահոց, որը պարունակում է անձի կենսաչափական տվյալները: Տվյալների էլեկտրոնային պահոցը և դրա ալեհավաքը ինտեգրվում են պոլիկարբոնատային տվյալների թերթում:


2. ԱՆՁՆԱԳՐԻ ՁԵՎԸ

Ձև N 1



Ձև N 2



ARM : ARM : ARM : ARM
ԵՐԵՎԱՆ
Անձնագիրը կրողի հովանավորն է Հայաստանի Հանրապետությունը
The holder of this passport is under the protection of the Republic of Armenia
ARM : ARM : ARM : ARM


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
ԱՆՁՆԱԳԻՐ
PASSPORT
Այս անձնագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության կողմից և հանդիսանում է միջազգային ճամփորդական փաստաթուղթ: Այն հաստատում է անձի ինքնությունը և իրավունք է տալիս ճամփորդելու:
This passport is issued by the Republic of Armenia and is an international travel document. It certifies the identity of the bearer and entitles him/her to travel.
CA0015896


Ձև N 3


REPUBLIC OF ARMENIA
PASSPORT
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԳԻՐ
Տիպ / Type
XX
Երկրի կոդ / Country code
XXX
Անձնագրի համար / Passport number
XXXXXXXXX
Ազգանուն / Surname
XXXXXXXXXXXXXXXXXX / XXXXXXXXXXXXXXXXXX
Անուն / Name
XXXXXXXXXXXXXXXXXX / XXXXXXXXXXXXXXXXXX
Սեռ / Sex
X / X
Քաղաքացիություն / Nationality
XXX
Ծննդյան օր / Date of birth
XX XXX / XXX XXXX
Ծննդավայր / Place of birth
XXXXXXXX / XXXXXXXXXX
Տրման ամսաթիվ / Date of issue
XX XXX / XXX XXXX
Տրամադրող մարմին / Issuing authority
XXX / XXX
Վավերական է մինչև / Date of expiry
XX XXX / XXX XXXX
X<XXXXXXXXXXXXXXXXX


Ձև N 4


Visa
Hayk Nahapet
Հայկ նահապետ
Վիզա
4
5
Դ
Ե

Ձև N 5


Visa
Erebuni Cuneiform Inscription, 782 BC
Էրեբունու սեպագիր արձանագրությունը, մ. թ. ա. 782 թ.
Վիզա
6
7
Զ
Է

Չև N 6


Visa
Artaxiad Boundary Stone, 2nd c. BC
Արտաշեսյան սահմանաքար, մ. թ. ա. 2-րդ դար
Վիզա
8
9


Չև N 7


Visa
Mother Cathedral of Holy Etchmiadzin, 301 AD
Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 301 թ.
Վիզա
10
11

Ձև N 8


Visa
Residence of the President of RA
ՀՀ նախագահի նստավայրը
Վիզա
12
13
ԺԲ
ԺԳ


Ձև N 9


Visa
National Assembly of RA
ՀՀ Ազգային ժողովը
Վիզա
14
15
ԺԴ
ԺԵ


Ձև N 10


Visa
Government Building of RA
ՀՀ Կառավարության շենքը
Վիզա
16
17


Ձև N 11


Visa
Constitutional Court of RA
ՀՀ Սահմանադրական դատարանը
Վիզա
18
19


Ձև N 12


Visa
Yerevan Cascade, 572 steps
Երևանի Կասկադ, 572 աստիճան
Վիզա
20
21
Ի ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ՀԱ


Ձև N 13


Visa
Mount Aragats, 4,090 m
Արագած լեռը, 4090 մ
Վիզա
22
23
ԻԲ
ԻԳ


Ձև N 14


Visa
Khor Virap Monastery, 4th–17th c.
Խոր Վիրապի վանքը, 4-17-րդ դդ.
Վիզա
24
25
ԻԴ
ԻԵ


Ձև N 15


Visa
Lavash Tonir House
Լավաշի թոնրատուն
Վիզա
26
27
ԻԶ
ԻԷ


Ձև N 16


Visa
Berdkunk Fortress, 10th c.
Բերդկունք ամրոցը, 10-րդ դար
Վիզա
28
29
ԻԸ
ԻԹ

Ձև N 17


Visa
Temple of Garni, 77 AD
Գառնու տաճարը, 77 թ.
Վիզա
30
31
Լ
ԼԱ


Ձև N 18


Visa
Lori Berd Fortress, 11th c.
Լոռի բերդ ամրոցը, 11-րդ դար
Վիզա
32
33


Ձև N 19


Visa
A View of Gyumri
Տեսարան Գյումրիից
Վիզա
34
35


Ձև N 20


Visa
Baghaberd Fortress, 4th–18th c.
Բաղաբերդ ամրոցը, 4-18-րդ դդ.
Վիզա
36
37


Ձև N 21


Visa
Sranots Bridge, 13th–14th c.
Սրանոցի կամուրջը, 13-14-րդ դդ.
Վիզա
38
39

Ձև N 22



Ձև N 23



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

30.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ